Լուրեր

ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ ԵՎ ԱՀՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը հոկտեմբերի 22-ին Երեւանում հանդիպում է ունեցել Ամերիկայի Հայկական համագումարի (ԱՀՀ) պատվիրակության հետ, որ գլխավորում էր կազմակերպության տնօրենների խորհրդի նախագահ Փիթեր Ոսպիկյանը: Ինչպես հայտնում են ԼՂՀ նախագահին առընթեր տեղեկատվության գլխավոր վարչությունից, հանդիպման մասնակիցները քննարկել են հարցեր՝ կապված ղարաբաղյան հակամարտության կարգավորման ներկա վիճակի եւ հեռանկարների, ինչպես նաեւ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի համար ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարության ընթացքի հետ:

ԼՂՀ նախագահը նշել է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում բանակցային գործընթացին որպես լիիրավ կողմ մասնակցելու ԼՂՀ պատրաստակամությունը: Նրա խոսքերով, անհրաժեշտ է պահպանել այն ամեն կառուցողականը, ինչն արդեն ձեռք է բերվել բանակցությունների ընթացքում:

Ամերիկայի Հայկական համագումարի անդամները Լեռնային Ղարաբաղի նախագահին հավաստիացրել են, որ կազմակերպությունը այսուհետ եւս ստորեն կհամագործակցի Հայաստանի եւ ԼՂՀ կառավարությունների հետ եւ կօգտագործի իր ներուժը համահայկական նշանակություն ունեցող խնդիրների լուծման համար:

Հանդիպմանը մասնակցել են ԼՂՀ արտաքին գործերի նախարար Աշոտ Ղուլյանը եւ Հայաստանում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Արման Մելիքյանը: